

**ԱՊԱԿԱՏԱՐ ԵՎ ԱՆՈՐՈՇ ՍԵՌԱԿԱՆ-ՏՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅՆԵՐԻ
ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ ԳՈՐԾԱԻՈՒՅՔՆԵՐԸ ԱՐԻՎԵԼԱՀԱՅ ԵՎ
ԱՐԻՎՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՈՒՄ**

Ա. Լ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հայ լեզվաբանական գրականության մեջ ապակատար դերբայը և հատկապես նրանով ու ժանդակ բայով կազմված կառույցները տարբեր գնահատումներ ու բնորոշումներ են ստացել, տեղիք տվել զանազան կարծիքների:

Արդի հայերենի ապակատար դերբայը ծագել է միջին հայերենում: Այն կազմված էր անորոշ դերբայից և Ո հոլովից (գրելոյ, կարդալոյ): Միջին հայերենից աշխարհաբարին անցնելու փուլում (15—16-րդ դդ.) Ո > Ո՛ հնչյունափոխությամբ առաջանում է ու-ով վերջավորվող այժմյան ապակատար դերբայը (գրելու, կարդալու), որն անցնում է թե արևելահայերենին, թե արևմտահայերենին: Ծագելով անորոշ դերբայի սեռական-տրական հոլովից՝ ապակատարը ձևով չի տարբերվում նրանից (անորոշի սեռական-տրական՝ գրելու—ապակատար՝ գրելու): Այս ձևային նույնությունը պատճառ է դարձել, որ որոշ լեզվաբաններ ապակատարն առանձին դերբայ չհամարեն: Դեռևս աշխարհաբար քերականության հիմնադիր Արսեն Այտընյանը գրում է, որ «Աներևութի սեռականը թէ՛ բաղադրելու ժամանակներ կը ձևացրնէ—Տեսնելու եմ, էի. և թէ՛ իբրև ածական կը գործածուի. այսպէս՝ Վախճալու երազներ, Թնայելու տուն, Տեսնելու (կամ տեսնուելու) բան մը, Չուտուելու կերակուրներ»¹: Սակայն ակնհայտ էր տեսնելու եմ և տեսնելու բան մը ու նման ձևերի իմաստային տարբերությունը, ուստի հենց Այտընյանը մեկ այլ տեղում (արդեն փակագծում) նշում է, որ անորոշի սեռականից կազմված ժամանակային ձևերում ու-ով վերջավորվող դերբայը ապառնի (ապակատար) դերբայն է. «Բաղադրելու ժամանակներէն ոմանք կը կազմուին... Աներևութին հոլովածին (որ է դերբայ ապառնի.) տեսնելու եմ. երբալու էիր»²:

Հետագայում, շնայած որոշ տարակարծությունների, այնուամենայնիվ գերիշխող է դառնում այն կարծիքը, թե ապակատարն առանձին՝ անորոշի սեռական-տրական հոլովից տարբեր, ինքնուրույն դերբայ է: Սրա փաստարկումն այն է, որ ու-ով վերջավորվող դերբայները, եթե որպես անորոշի սեռական-տրականի ձևեր իմաստային հակադրության մեջ են մյուս հոլովների հետ (կարդալու—կարդալու—կարդալուց—կարդալով), ապա, որպես ապակատար դերբայ, իմաստային հակադրության մեջ են վաղակատար և անկատար դերբայների հետ (կարդացել—կարդում—կարդալու): Բացի այս, շնայած բոլոր բարբառներում անորոշ դերբայը հոլովվում է, բայց ոչ բոլոր բարբառներն են, որ ունեն ու—եմ/էի ժամանակային ձևերը³: Սակայն, սրանից բացի, ինչպես կտեսնենք, կա նաև մեկ այլ, ավելի էական հատկանիշ, որով տարբերվում են անորոշի սեռական-տրական հոլովածին ու ինքնուրույն դարձած ապակատար դերբայը:

Բայց ապակատարը, որպես առանձին, ինքնուրույն դերբայ ընդունելուց հետո էլ, չլուծված է մնում ապակատարի և անորոշի սեռական-տրականի ձևերի տարբերակման խնդիրը: Սրա վերաբերյալ տարբեր լեզվաբաններ տարբեր, երբեմն նույնիսկ իրարամերձ կարծիքներ են հայտնել:

Այս հարցը պարզելու համար նախ թվենք, թե ինչ գործառույթների ունի հայոց լեզվում ու վերջավորությամբ դերբայը: Թե արևելահայերենում, թե արևմտահայերենում այս դերբայն ունի հետևյալ գործառույթները.

1. Կազմում է ժամանակային ձևեր՝ գրելու եմ, կարդալու էին և այլն:

¹ Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987, էջ 102:

² Նույն տեղում, էջ 94:

³ Տե՛ս Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու (ձևաբանություն), Երևան, 1987, էջ 264:

2. Կազմում է երկրորդական-վերլուծական ժամանակներ՝ գրելու լինեմ/լինեի (ըլամ/ըլայի):

3. Կարող է գործածվել առանձին, որպես նախադասութիւն ինքնուրույն անդամ:

Այժմ տեսնենք, թե ու-ով վերջավորվող դերբայը նշված կիրառութիւններից ո՞րում է անորոշի սեռական-տրական հոլովաձև, որում ապակատար դերբայ, և ի՞նչ հատկանիշներով են սրանք իրարից տարբերվում:

1. Ու-ով վերջավորվող դերբայ+-եմ/էի կառուցով արտահայտված ստորոգյալները արդի հայերենի երկու գրական տարբերակներում էլ գործածական են:

Նախ խոսենք արևելահայերենի մասին: Ժամանակակից արևելահայերենում վերոհիշյալ կառուցով ստորոգյալներում ու-ով դերբայները կարող են լինել թե ապակատար դերբայ, թե անորոշի սեռական-տրական հոլովաձև: Մինչև այժմ դրանք տարբերակվել են միայն իմաստային հիմունքով, որը տարբերակման համար այս դեպքում այնքան էլ հստակ միջոց չէ: Այս մասին Մ. Անատրյանը գրում է. «Ոչ մի կասկած չի կարող լինել այն մասին, որ, սաեսք, «նա այս ջուրը խմելու է» և «Այս ջուրը խմելու է», «նա այս ապրանքը վաճառելու է» և «Այս ապրանքը վաճառելու է» նախադասութիւններից առաջիններում ՈՒ ձևերը կերպային-ժամանակային իմաստ են արտահայտում և իմաստային այդ հիմունքով էլ ավանդի դերբայներ են, իսկ երկրորդներում հատկանշային-որակական իմաստ են արտահայտում և իմաստային այդ հիմունքով էլ անորոշի սեռական-տրական հոլովաձևեր են»⁴: Կարծիքը միանգամայն ճիշտ է, սակայն տարբերակումը կատարվում է միայն իմաստային հիմունքով: Ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ ապակատար դերբայը և անորոշի սեռական-տրական հոլովաձևը իրարից տարբերվում են նաև քերականորեն: Բերենք վերոհիշյալ նախադասութիւնները. «Այս ջուրը խմելու է» և «նա այս ջուրը խմելու է»: Երբ սրանք դարձնում ենք ժխտական՝ «Այս կտարի է խմելու չէ» և «նա այս ջուրը չի խմելու», ապա միանգամից պարզ է դառնում ապակատարի և անորոշի սեռական-տրական հոլովաձևերի տարբերութիւնը: Անորոշ անկախ դերբայ է, ուստի ժխտական դառնալու նրանով արտահայտված ստորոգյալը հանդես է բերում այն առանձնահատկութիւնը, որը բնորոշ է անկախ դերբայներով կամ այլ խոսքի մասով արտահայտված բազադրյալ ստորոգյալներին. օժանդակ բայի ժխտական ձևը չի տեղափոխվում: Ինչպես՝ գեղեցիկ է—գեղեցիկ չէ, ծառ է—ծառ չէ, երգող է—երգող չէ, այնպես էլ՝ խմելու է—խմելու չէ: Ապակատարը կախյալ դերբայ է, ուստի նրանով արտահայտված ստորոգյալը հանդես է բերում այն առանձնահատկութիւնը, որը բնորոշ է կախյալ դերբայներով արտահայտված պարզ ստորոգյալներին. օժանդակ բայի ժխտական ձևը անցնում է դերբայից առաջ: Ինչպես՝ վազում է—չի վազում, խաղացել է—չի խաղացել, այնպես էլ՝ խմելու է—չի խմելու: Ահա, հենց այս ձևով ու—եմ/էի կառուցներում կարելի է իրարից տարբերել անորոշի սեռական-տրական հոլովաձևն ու ապակատար դերբայը, ինչպես նաև հիմնավորել, որ ապակատարն առանձին, ինքնուրույն դերբայ է և, որպես կախյալ դերբայ, տարբերվում է անկախ անորոշ դերբայից:

Այսպիսով, բոլոր այն դեպքերում, երբ ու—եմ/էի կառուցով ստորոգյալներում օժանդակ բայը ժխտական դառնալիս չի փոխում իր շարադասութիւնը, գործ ունենք անորոշի սեռական-տրական հոլովաձևի հետ, իսկ երբ ժխտական օժանդակ բայը տեղափոխվում է դերբայից առաջ՝ ապակատար դերբայի հետ: Պետք է նշել, որ փաստորեն ապակատարն ու անորոշի սեռական-տրականը տարբերակվում են շարահյուսական մակարդակում, նախադասութիւն մեջ, և միայն դրանից ելնելով է, որ կարելի է ձևարանական մակարդակում առանձնացնել ապակատար դերբայն իր հարացուցյով, քանի որ ուտելու է, վաճառելու է, ցանելու է և նման ձևվերն առանձին տարբերակված չեն անորոշ դերբայի սեռական-տրական հոլովաձևից:

Եթև հարցն այս ձևով լուծվում է արևելահայերենում, ապա արևմտահայերենում այն բոլորովին ուրիշ բնույթ է ստանում: Արևմտահայերենում ապակատար դերբայը կազմում է սահմանական եղանակի բաղադրյալ ապառնի (գրելու եմ) և բաղադրյալ անցյալի ապառնի (գրելու էի) ժամանակաձևերը: Սակայն այստեղ ժխտական դառնալիս օժանդակ բայը միշտ պահում է իր կայուն շարադասութիւնը՝ «Ու մինչև վերջը կենալու չեմ ատ տեղերը» (ՀՄ). «Որ եկեր է, ձեզի մնալու չէ, էրիկը մեր տունն է, մեզի պիտի գա» (ՀՄ). «Պիտի խոսի ու խոսի, թող խոսի, իս մորթելու չե՞ն յա» (ՀՄ). «Մեկու մը բարև տալու չէ» (ՀՊ). «Անտես ընելու չէ գանոնք ալ» (ՀՊ):

Այս հարցն ուսումնասիրելու համար պետք է հաշվի առնել ու-ով կազմվող ձևերի իմաստային յուրահատկութիւնն արևմտահայերենում: Այստեղ առաջին և երկրորդ դեմքերով ստորոգյալները, որոնք արտահայտված են ու վերջավորութիւնով դերբայներով, իմաստով համապատասխանում են արևելահայերենի հարկադրական եղանակով արտահայտված ստորոգյալ-

⁴ Նույն տեղում, էջ 265:

ներին. «— Ատ խոսքը առաջ ըսելու էիր (արևել. պետք է ասել), որ զգուշանայի» (2Պ). «Շարաթ մը ու ազնի առշվրեն սկսելու էիք (արևել. պետք է սկսել)» (2Մ):

Երրորդ դեմքին բնորոշ է երկու կիրառություն. մի շարք դեպքերում արևմտահայերենի ու-ով ձևերի երրորդ դեմքը ևս իմաստով համապատասխանում է արևելահայերենի հարկադրականի ձևերին. «Երրորդ կարգի ճամփորդներու մեջ ըլլալու էր (արևել. պետք է լիներ) միս շինք» (ՕՉՍ). «Եթէ կուզես տեսնել, մէջ մը եկեղեցիին բակը գնա, հիմա հոն ըլլալու է (արևել. պետք է լինի) տղոց հետ» (Մ). «Ամեն օր ծառերուն թուփը ժողովող մը ունենալու էին (արևել. պետք է ունենային)» (2Մ). «Անհասանելի ուժ մը ունենալու էր (արևել. պետք է ունենար) Հայրիկը» (ԱՄ):

Սակայն արևմտահայերենի ու-ով ձևերի երրորդ դեմքով ստորոգյալները կարող են հանդես գալ նաև յուրահատուկ կիրառությամբ՝ համապատասխանելով ոչ թե արևելահայերենի հարկադրական եղանակի ձևերին, այլ պետք է անորոշ դերբայ կառույցներին. «Կրելու է (արևել. պետք է գրել), երբ ներքին մղումը կհրե գրեզ» (ԲՆ). «Բանալը դուրին էր, փայտն բանալին գտնելու էր (արևել. պետք էր գտնել)» (2Մ). «Չուլիս կըլու բան չէ, շուտով աղշիկ մը գտնելու է (արևել. պետք է գտնել), շոգնեալ մտնելու, և փախչելու է (արևել. պետք է մտնել ու փախչել)» (2Պ): Իմաստային այս յուրօրինակ կիրառությունն էլ պատճառ է դառնում, որ արևմտահայերենում անորոշ դերբայի սեռական-տրական հոլովաձևերը ու—եմ էի կառույցը չկազմեն: Եթե ասվի «Այս հացը ուտելու է», կհասկացվի՝ «Այս հացը պետք է ուտել»: Ուստի արևմտահայերենում կասվի՝ «Ասիկա ուտելու հաց է»: Երրորդ դեմքի այս յուրահատուկությունն էլ (իսկ ապակատարն է անորոշի սեռական-տրական հոլովի շփոթության վտանգն առաջ է գալիս հենց երրորդ դեմքի ստորոգյալներում. համա. հացը ուտելու եմ ես/է) արևմտահայերենում վերացնում է ապակատարն է անորոշի սեռական-տրականի շփոթության վտանգը ու—եմ/էի կառույցներում, քանի որ իմաստային շփոթությունից խուսափելու համար անորոշի սեռական-տրականով վերահիշյալ կառույցները չեն կազմվում:

2. Ինչպես նշվեց, ու-ով վերջավորվող դերբայներով երկու գրականներում էլ կազմվում են նաև բաղադրյալ-երկրորդական ժամանակաձևեր: Այստեղ չենք կարող ծխտական դարձնելու միջոցով որոշել՝ այս դերբայը ապակատարն է, թե՛ անորոշի սեռական-տրական հոլովաձևը, քանի որ օժանդակ բայն արդեն տեղաշարժված է (գնալու է կըլի) և ծխտական շմանիկն ընդունում է առանց տեղաշարժման (գնալու չի եղել): Այս հարցի մասին խոսելիս՝ էդ. Աղայանը գտնում է, որ գնալու լինեմ, լինելի ձևերում «գնալու կարելի է համարել և՛ անորոշի սեռական հոլով, և՛ ապանի դերբայ, և այստեղ էլ, ինչպես շատ ուրիշ դեպքերում, զրգվար է հաստատապես ասել, թե ո՞րն է»: Ինչպե՞ս վարվել այս դեպքում:

Ժամանակակից արևելահայերենում բաղադրյալ-երկրորդական ժամանակները կազմվում են հարակատար, համակատար և ու-ով վերջավորվող դերբայներով. գրած կլինեմ—գրելիս կլինեմ—գրելու կլինեմ: Ինչպես տեսնում ենք, ու-ով ձևերը իմաստային հակադրության մեջ են մտնում անկախ դերբայների հետ, իսկ ապակատարը կախյալ դերբայ է, հետևաբար այստեղ ու-ով վերջավորվող դերբայը անկախ անորոշ դերբայի սեռական-տրական հոլովաձևը պետք է համարել: Ուրեմն, եթե կարդացել է—կարդում է—կարդալու է հակադրության մեջ ու-ով ձևը ապակատար դերբայն է, քանի որ իմաստային հակադրության մեջ է կախյալ դերբայների հետ (սրանում կարելի է համոզվել նաև ծխտական դարձնելով՝ չի կարդացել—չի կարդում—չի կարդալու), ապա կարդալիս է լինում—կարդացած է լինում—կարդալու է լինում բաղադրյալ-երկրորդական ժամանակներում ու-ով ձևը անորոշի սեռական-տրականն է, քանի որ իմաստային հակադրություն է կազմում անկախ դերբայների հետ, իսկ անորոշը նույնպես անկախ դերբայ է: Բացի այս, կա նաև մեկ այլ ուշադրով հանգամանք: Բաղադրյալ-երկրորդական ժամանակները ժողովրդախոսակցական լեզվում կազմվում են ոչ միայն իս, ած, ու ձևերով, այլ նաև անորոշ դերբայի բացառական ճյուղով՝ հասնելուց կլինի, ուտելուց է կըլի, կարդալուց է լինում և այլն: Այսինքն՝ ակնհայտ է, որ լինել բայի խոնարհված ձևերի հետ բաղադրյալ-երկրորդական ժամանակներում քերականական հարաբերության մեջ են մտնում անորոշ դերբայի հոլովված ձևերը: Հնդհանրապես բաղադրյալ-երկրորդական ժամանակներում դերբայները բացահայտ պահում են իրենց անկախությունը: Այսպես. չնայած բոլոր բայերը արևելահայերենում ունեն հարակատար դերբայ (ասած, քերած, գրած, դրած, կտորած, ֆնած և այլն), բայց ոչ բոլոր բայերն են կազմում հարակատար—եմ էի կառույցը (ասած է, քերած է, գրած է, դրած է, կկած է, կտորած է և նման ձևերը գործածական չեն): Իսկ բաղադրյալ-երկրորդական ժամանակներում բոլոր բայերը կարող են զրգվել հարակատար դերբայով՝ [արած, քերած, գրած, դրած, կտորած, ֆնած] կլինի: Այսինքն՝ հարակատարը դրսևորվում է այնպես, ինչպես անկախ կիրառության դեպքում: Իսկ բաղադրյալ-երկրորդական ժամանակներում հանդես եկող մյուս՝ համակատար դերբայի անկախ լինելն այնքան ուժգին է դրսևորվում, որ այն անգամ չի կազմում իս—եմ/էի կառույցը և միշտ գործածվում է առանձին: Հետևաբար, բա-

⁵ է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 353:

կադրայւ-երկրորդական ժամանակաձևերում հանդես եկող երեք դերբայներն էլ անկախ են, ուստի՝ ու-ով ձևերը պետք է համարել անկախ անորոշ դերբայի հոլոված:

Արևմտահայերենում բաղադրայւ-երկրորդական ժամանակները կազմվում են՝ ա) հարակատար կամ ու վերջավորութիւններով (գրած կըլլամ, գրելու կըլլամ): Բ) լինել բայի վաղակատարով և դիմավոր ձևերով (կը գրեմ եղեր, պիտի գրեմ եղեր և այլն): Մի կողմ թողնելով երկրորդ ձևը, որը խոնարհման հարացույցն է եղեր դերբայով, անցնենք մյուսին: Փաստորեն այստեղ էլ ու-ով դերբայները իմաստային հակադրութիւն մեջ են հարակատարի հետ: Սակայն վերջինս արևելահայերենում և արևմտահայերենում նույնը չէ: Արևելահայերենում հարակատարն անկախ դերբայ է, և դա հաստատվում է նաև ժխտականի ձևով՝ օժանդակ բալը չի տեղափոխվում⁶. հոգնած է—հոգնած չէ, նստած է—նստած չէ: Արևմտահայերենում հարակատարը միաժամանակ թե անկախ դերբայ է, քանի որ կարող է գործածվել առանձին (հոգնած մարդ), թե կախյալ, քանի որ պահպանել է իր բայական հատկանիշը՝ բերած է—չէ բերած, եկած է—չէ եկած, և մտնում է սահմանական եղանակի բայաձևերի մեջ:

Սակայն հարահասարակ այս յուրահատկութիւնը այստեղ էական դեր չի խաղում, և ճիշտ կլինի արևմտահայերենում նույնպես բաղադրայւ-երկրորդական ժամանակներում ու-ով ձևերը համարել անորոշի սեռական-տրականը, քանի որ այստեղ էլ առաջնայինը ոչ թե բայական, այլ վիճակային իմաստն է, ինչպես արևելահայերենում:

3. Արդեն նշվել է, որ ու-ով դերբայները երկու գրականներում էլ հանդես են գալիս նաև առանձին, որպես նախադասութիւն ինքնուրույն անդամ: Ի՞նչ է այս դեպքում ու վերջավորութիւններով դերբայը. անորոշի սեռական-տրական հոլովածձև, թե՞ ապակատար դերբայ: Այս մասին Գ. Սևակը գրում է. «Ծիկ կասկած առաջացնող այդ բայաձևը կարելի է փոխարինել ապառնի դերբայի երկրորդ ձևով, կամ «արժանի» բառն ավելացնել նրան՝ առանց տվյալ բառի իմաստը փոխելու, ուրեմն նա ապառնի դերբայ է: Օրինակ՝ Լթե կարելի է հիշատակելու ժամանակ ասելու փոխարեն ասել հիշատակելի, հիշատակելիք կամ հիշատակելու արժանի ժամանակ, ուրեմն հիշատակելու բառն այստեղ ապառնի դերբայ է (մեր ժամանակը հիշատակելու ժամանակ է): Իսկ Լթե բառի այսպիսի փոփոխութիւն տվյալ նախադասութիւն (կամ բառակապակցութիւններին) մեջ չի կարելի կատարել՝ առանց իմաստի աղճատման, նշանակում է, այս դերբայը անորոշ դերբայի սեռական հոլովն է: (Ընդգծումը մերն է— Ա. Ս.):

Այժմ տեսնենք, թե որքանով է հնարավոր առաջարկված ձևով իրարից տարբերել անորոշի սեռական-տրականն ու ապակատար դերբայը: Ինչպես տեսանք, բերված օրինակում որոշիչ-որոշյալ (հիշատակելու ժամանակ) կապակցութիւն մեջ որոշիչը համարվում է ապակատար (ապառնի) դերբայ: Վերցնենք հետևյալ կապակցութիւնները. գրելու բուլք, հագնելու զգեստ, խաղալու վայր: Այս կապակցութիւնները նույնպես կազմված են որոշիչից և որոշյալից, որտեղ որոշիչը դարձյալ ու վերջավորութիւններով դերբայով է արտահայտված: Այստեղ շենք կարող այն փոխարինել «ապառնի դերբայի երկրորդ ձևով», ինչպես՝ գրելի(ք) թուղթ, հագնելի(ք) զգեստ, խաղալի(ք) վայր, և ոչ էլ մասնավանդ կարող ենք ավելացնել «արժանի» բառը: Սակայն բոլոր դեպքերում գործ ունենք որոշիչ-որոշյալ կապակցութիւն հետ, որը կազմված է ու վերջավորութիւններով դերբայ+գոյական կաղապարով: Ուրեմն, վերը բերված օրինակի «հիշատակելու» բառի փոխարինումը հիշատակելի(ք) ձևով կամ «արժանի» բառի ավելացումը պայմանավորված է բառերի կոնկրետ իմաստներով (ժամանակը կարող է հիշատակելու արժանի լինել կամ չլինել): Այս-ով վերջավորվող բոլոր ձևերը, որոնք գործածվում են անկախ, առանց օժանդակ բայի, պետք է համարել անորոշ դերբայի սեռական-տրական հոլովածը: Վերցնենք հետևյալ զույգերը.

Ա	Բ
գրելու թեմա	դասի թեմա
գրելու ժամանակը	դասի ժամանակը
գնալ գրելու	գնալ դասի

Ա շարքի ընդգծված դերբայներից առաջինը որոշիչ է, երկրորդը՝ հատկացուցիչ, երրորդը՝ նպատակի պարագա: Բ շարքի համապատասխան կառույցներում սեռական-տրական հոլովով դրված գոյականներից առաջինը նույնպես որոշիչ է, երկրորդը՝ հատկացուցիչ, երրորդը՝ նպատակի պարագա: Այսինքն՝ միևնույն կաղապարներով կապակցութիւններում ու-ով վերջավորվող բոլոր դերբայներին համապատասխանում են սեռական-տրական հոլովով

⁶ Տե՛ս Ա. Սարգսյան, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Երևան, 1985, էջ 227:

⁷ Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1955, էջ 300; Հմմտ. Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսութիւն, Երևան, 1958, հ. 1, էջ 225:

գոյականներ: Դա ապացուցվում է նաև հարցման դեպքում. ինչպիսի՞ ժամանակը՝ գրելու— դասի. ինչի՞՞ գնալ՝ գրելու—դասի: Հետևաբար, եթե սեռական-տրական հոլովով գոյականներին միևնույն գործառույթում համապատասխանում են սեռականի վերջավորությամբ դերբայներ, ապա դրանք էլ պետք է համարվեն անորոշի սեռական-տրական հոլովաձևեր, և ոչ մի հիմք չկա այդ դերբայներն ապակատար համարելու: Այդպես է մտածում նաև Մ. Արևելյանը. «Սեռականը ցույց է տալիս՝ ինչ-որ մի տեղում կամ ժամանակում կա կամ կատարվում է: Խնդրառու գոյականը սովորաբար մի դիրբայ կամ բայական անուն է լինում: Օրինակ՝

1. Մեք գրասենյու (գրասենի) տեղը (տեղը, ուր գրասենում ենք):—Ներկայացման սրահը լի էր բազմություն (սրահն, ուր ներկայացումն էր տրվում):— Պատերազմի դաշտը: Ծւրին ցանկու արտերը: Քնելու (քնի) սենյակը:—Սգի տուն:—Գինու կարաս:

2. Հնձելու (հնձի) ժամանակ (ժամանակ, երբ հնձում են): Դատաստանի օրը: Հրածելոյի ժամ: Մեր փորձության տարին անցավ: Նրա քնելու (քնի) ժամանակն եկավ»:

Եթե ու-ով վերջավորվող դերբայներն առանձին գործածության դեպքում համարենք ապակատար, ապա այդ դեպքում պետք է ապակատարը համարենք անկախ դերբայ, քանի որ կարող է գործածվել առանձին՝ առանց օժանդակ բայի: Այդ դեպքում ապակատար—եմ/էի կառույցով ստորոգյալները պետք է համարվեն բաղադրյալ: Սակայն, ինչպես տեսանք, այս ստորոգյալները պարզ են, քանի որ օժանդակ բայի ժխտական ձևերը տեղափոխվում են չերբայից առաջ: Արեմն՝ անկախ գործածության դեպքում ու վերջավորությամբ դերբայները անորոշի սեռական-տրական հոլովի ձևերն են:

Այսպիսով, կարելի է եզրակացնել.

Արևելահայերենում ու—եմ/էի կառույցներում ու-ով ձևերը ապակատար են, եթե ժխտական դարձնելիս օժանդակ բայը տեղափոխվում է դերբայից առաջ, անորոշի սեռական-տրական հոլովաձևն են, եթե օժանդակ բայը ժխտական դառնալիս չի տեղափոխվում: Արևմտահայերենում ու—եմ/էի կառույցը կազմում է միայն ապակատար դերբայը, ուստի շփոթության վտանգ չկա:

Երկու գրականներում էլ բաղադրյալ-երկրորդական ժամանակաձևերը կազմվում են անորոշ դերբայի սեռական-տրական հոլովով:

Երկու գրականներում էլ, բոլոր դեպքերում, երբ ու-ով դերբայները հանդես են գալիս առանձին, որպես նախադասության ինքնուրույն անդամ, դրանք պետք է համարել անորոշի սեռական-տրականի ձևեր:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- | | |
|-------------------------|-------------------------|
| ԱՄ — Անդրանիկ Մառուկյան | ՀԳ — Հակոբ Պարոնյան |
| ԲՆ — Բենիամին Նուրիկյան | Մ — Մամուլ |
| ՀՄ — Հակոբ Մնձուրի | ՕԶՍ — Օննիկ Զիֆթե-Սարաֆ |

А. Л. САРКИСЯН — Синтаксическая функция причастий несовершенного вида и родительно-дательного падежей неопределенного в восточно- и западноармянском.— В обеих ветвях армянского литературного языка причастие несовершенного вида своими функциями отличается от родительно-дательного падежей неопределенного причастия несмотря на формальное сходство — к такому выводу приходит автор статьи на основе изучения семантических и грамматических особенностей и синтаксической роли этих причастий.

Մ. Արևելյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 424: